

դրուեցաւ Պարիս , Տուրնէլի պալատը (1) : Այստեղ փոխադրուելուն պատճառն այն էր , որ Կարոլոս Զ հեռացած ըլլալով Լուվրի պալատէն եւ բնակութիւն հաստատած Ս. Պօղոսի պալատը (2) , որ Տուրնէլի դէմը կը գտնուէր , միշտ պէտք ունէր Լեւոնի բարի խորհուրդներուն . ուստի՝ փափագեցաւ որ Հայոց թագաւորն իրեն մօտ ըլլայ եւ մասնակցի արքունի ժողովներու , ինչպէս կըսէ Միլլեն (3) : Ասոր իբր ասպնոց կընամ յիշել նաեւ , որ Լեւոն անբաժան հետեւած է Կարոլոսի , ո՛ւր որ գացած է Ֆրանսայի թագաւորը , նոյն իսկ հանդէսներու եւ խրախճանութիւններու մէջ (4) : Այս հանդէսներու ժամանակ Լեւոն ընդհանրապէս պատուի առաջին տեղը զբաւած է . ինչպէս՝ 1389-ին Սէն-Դընիի մէջ ի պատիւ սիկիլիական հեծելազօրին արուած հանդէսի մը ժամանակ Կարոլոսի աջ կողմը նստած է Սիկիլիայի թագուհին , Բուրգոնի եւ Տուրէնի դքսերը , ու յետոյ՝ Հայոց թագաւորը (5) : Իսկ նոյն տարին երբ Կարոլոսի կինը՝ Isabeau de Bavière՝ հանգիսաւոր արարողութիւններով Ֆրանսայի թագուհի կը պսակուէր եւ մեծաշուք սեղանի մը շուրջ բազմած էին բոլոր բարձրաստիճան հրաւիրեալներ , Լեւոն կը նստէր թագուհիին քով : Ուրիշ անգամ մըն ալ , 1391-ին , Կարոլոսի յաղթական կերպով Ամիէն մտած օրը՝ Հայոց թագաւորը կը քալէր Ֆրանսայի թագաւորին քովէն , յետոյ կուգային թագաւորին հօրեղբայրներն ու այլ ազգականները (6) :

Ասոնցմէ զուրս տեղեկութիւն չունինք , թէ Հայոց թագաւորն ուրիշ ի՛նչ գործ տեսած է Ֆրանսայի մէջ , եւ ի՛նչ կեանք վարած (7) , միայն գիտենք թէ Անգլիայի թագաւորէն ընդունած գոհարեղէններն ու զարգերը զողցնել տուած է Պարիսի մէջ (8) , եւ Կաստիլյայի Յովհաննէս թագաւոր-

(1) Պալատիս մասին տե՛ս գրքիս եր. 6, իսկ պատկերը՝ եր. 23 :

(2) Պալատիս եւ համանուն եկեղեցիի մասին տե՛ս գրքիս եր. 4 :

(3) « Le roi d'Arménie fut admis dans le conseil, où il donna quelquefois de bons avis. » (A. - L. Millin, *Antiquités nationales*, հս. Ա, եր. 125) :

(4) Տե՛ս Ֆրուասար , գիրք Գ, գլ. ԻԶ :

(5) *Chronique du Religieux de Saint-Denys*, հս. Ա, եր. 591 :

(6) *Chronique du Religieux de Saint-Denys*, հս. Ա, եր. 737 :

(7) Ուրիշ տեղ (գլ. ԻԳ) Լեւոնի գաւակներու մասին խօսած ատեն առիթը պիտի ներկայանայ մի քանի տղով քննելու , երբ ներելի է , Հայոց վերջին քաղաւորին ներքին կեանքը , աւերող շացնելու համար այս կենսագրութիւնը :

(8) N. Jorga, *Philippe de Mézières*, եր. 464 :